

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Հրաժեշտ փառաւոնին



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Lyn Doerksen

Story 11 of 60


www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian



փառաւոնին շատ
զայրացած էր: Աստուած
հրամայած էր Մովսէսի
միջոցով, որ ազատ
արձակէ իսրայէլացի
ծառաները, որ
Եգիպտոսէն դուրս
գան: Սակայն ինք
մերժած էր:


1



"Աւելի տքնաջան
աշխատուցէք",
հրամայեց
փառաւոնին
ծառայապետին:
Հիմա վիճակը աւելի
վատթարացաւ
իսրայէլացիներուն:


2

"Չաւաքեցէք ձեր անձնական յարդը: Մենք այլեւ չենք հայթայթեր ձեզի: Բայց եւս քանակով գառերը շինեցէք": Ասոնք էին փառաւորնին տոր հրամանները:




3

Գործի պատասխանատուները կը մտրակէին քանի մը ծառաներ, ...



4

... որոնք բաւական ժամանակ չունէին հաւաքելու յարդ եւ բաւական քար շինելու:



5

Ժողովուրդը մեղադրեց Մովսէսը եւ Ահարոնը իրենց բաղձանքին համար: Մովսէս տեղ մը գտաւ աղօթելու համար:




6

"Ո՛վ Տէր", պոռաց ան, "Դուն երբեք չի փրկեցիր քու ժողովուրդդ", "Ես եմ Տէրը եւ ես դուրս պիտի բերեմ", պատասխանեց Աստուած:



7

Յետոյ Աստուած անգամ մը եւս Մովսէսը եւ Ահարոնը դրկեց փառաւորնին: Երբ հզօր կառավարիչը անոնցեմ նշան մը ուզեց, որ



8


Աստուծմէ Է Ահարոնի ցուպը, ցուպը սողացող օձի մը վերածուեցաւ:

"Կանչեցեք իմ
կախարդներս"
բարկացած ձայնով
ճչաց փառաւոնին:




9

Երբ Եգիպտոսի
կախարդները
նետեցին իրենց
ցուպերը բոլորն ալ
օձի վերածուեցան,
սակայն, Ահարոնի
ցուպը կուլ տուաւ
բոլորին: Տակաւին,
փառաւոնին մերժեց
ժողովուրդը ազատ
արձակել:




10

Յաջորդ առաւօտ, Մովսէս եւ Ահարոն փառաւոնին
հանդիպեցան գետին մօտ:




11

Երբ Ահարոն իր ցուպը հատեց գետի ջուրը արհևի
վերածուեցաւ: Ձուկերը սատկեցան, ժողովուրդը
չէր կրնար ջուր խմել:



12

Բայց փառաւոն կարծրացուց իր սիրտը: Ան չէր
թողուր, որ իսրայելացիները թողնեն Եգիպտոսը:




13

Նորէն Մովսէս ըսաւ
փառաւոնին, որ
ձգէ Աստուծոյ
ժողովուրդը
ազատ:
փառաւոն
անգամ մը
ես մերժեց:
Աստուած
ուրիշ
փորձանք
մը դրկեց:




14



Ամբողջ
Եգիպտոսը
գորտերով
լեցուեցաւ:
Ամէն տուն,
ամէն սենեակ
եւ նոյնիսկ
ամէն փուռ
գորտերով
լեցուեցան:

15




"Ինձի համար աղօթե՛,
որ Աստուած վերցնէ
այս գորտերը",
աղաչեց
փառաւոն, "եւ
ես պիտի ձգեմ
ժողովուրդը, որ
երթայ", բայց
երբ գորտերը
անհետացան
փառաւոն փոխեց
իր միտքը: Ան
ազատ չէր
արձակէր
ծառաները:

16



Աստուած պիլիոններով մանր միջատներ, որ ոչիլ
կը կոչուէին, դրկեց: Ամէն անձ եւ ամէն գազան կը
գերուտէին, անոնց խածերէն, սակայն փառաւոն
չէր ենթարկուեր Աստուծոյ:

17



Յետոյ Աստուած թռչող
միջատներ դրկեց անթիւ
եւ անհամար: Աստուած
հիւանդութիւն դրկեց
սատկեցնելու
համար
Եգիպտոսի
հոտերը:

18




Աստուած ցաւալի
այրուածքներ դրկեց եւ
ժողովուրդը սաստիկ
տառապեցաւ:
Տակաւին
փառաւոն
դիմադրեց
Աստուծոյ:

19




Այրուածքին
համաճարակէն
ետք Աստուած
մարախներու
հրոսախումբ դրկեց:
Մարախները կերան
ամէնի ինչ որ
կանաչութիւն
է հողին մէջ:

20




Յետոյ Աստուած երեք օր լման մթութիւն դրկեց: Սակայն համար փառաւոն ազատ չէր արձակէր իսրայելացիները:

21



"Մէկ համաճարակ մը եւս պիտի դրկեմ" ազդարարեց Աստուած "Կես գիշերին, ամեն առաջին զաւակները մարոց եւ անասուններուն պիտի մահանան":

22



Աստուած ըսաւ իսրայելացիներուն, որ իրենց զաւակները պիտի փրկուին, եթէ զառնուկի արիւն սրսկեն իրենց դռներուն առջեւ եւ շուրջը:

23



Կես գիշերին, զօրաւոր եւ մեծ լաց ու կոծ բարձրացաւ Եգիպտոսի մէջ: Մահը զարկաւ:

24



Ամեն տունի մէջ նուազագոյնը մէկ հոգի մահացաւ:

25




"Դուրս ելեք", աղաչեց փառաւոն Մովսէսին:

26



"Գևա՛, Տիրոջ ծառայե՛",
արագօրէն Աստուծոյ
ժողովուրդը քշեց
Եգիպտոսի
սահմաններէն
անդին:

27



Աստուած ըսաւ Մովսէսի,
որ յիշէ Պատեքի գիշերը,
որովհետեւ Աստուծոյ հրեշտակը անցաւ
խրայելացիներուն տուներուն վրայէն եւ
հարուածեց փառաւոն եւ իր ժողովուրդը:

28



430 տարիներ Եգիպտոսի մէջ,
Աստուծոյ ժողովուրդը
հիմա ազատ էր:

29




Աստուած անոնց առաջնորդեց ամպի
սիւնի մը մէջ օրէ օր, եւ կրակի
սիւնի մը մէջ ամէն գիշեր:

30



Բայց փառաւոն
տակաւին չէր
վերջացած
խրայելացիներէն:
Նորէն ան
մոռցաւ
Աստուծոյ:

31



Անգամ մը եւս իր
միտքը փոխեց,
հաւաքեց իր
բանակը եւ իր
ծառաներուն
ետեւէն գնաց:
Շուտով, անոնց
պաշարեց
գահաւանդներուն
եւ ծովուն
միջեւ:

32

"Տերը պիտի պատերազմի ձեզի համար",
ըսաւ Մովսէս: Մովսէս առաջ գնաց ջուրին
եզերքը եւ իր թելը երկարեց:

33



Մեծ հրաշք մը
պատահեցաւ:
Աստուած ջուրին
մէջ ճամբայ
մը բացաւ:
Ժողովուրդը
ապահով
անցաւ:

34

Յետոյ փառաւոնի բանակը անոնց հալածեց
կարմիր ծովուն մէջ: "Հիմա պիտի բռնենք
անոնց", կարծեցին զինուորները:
Սակայն Աստուած
ջուրերը գոցեց:



Եգիպտոսի ուժեղ բանակը կուլ
տրուեցաւ: Հիմա փառաւոն
գիտցաւ, որ Իսրայէլի
Աստուածը ամենուն
վրայ Տեր էր:



35



36



Հրաժեշտ փառաւոնին

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ելից 4 - 15

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք
մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած
այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց,
որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար
պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը
բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը
պահանջես որպէսզի ներք քեզի քու մեղքերուդ համար,
Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ
դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերեդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր
Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար
եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ
կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի
որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

